Աննա Արևշատյան (Հայաստան)
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ

ԱՆԻԻ ԴԵՐԸ ՀԱՅ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայ միջնադարյան երաժշտական մշակույթի պատմության մեջ Անին հատուկ տեղ է գրավում: Ըստ պատմիչների հաղորդած տեղեկությունների՝ Անիում ծաղկել են ինչպես ժողովրդապրոֆեսիոնալ՝ գուսանական երաժշտությունը, այնպես էլ հոգևոր մասնագիտացված երգարվեստը: Անիի բարձրագույն տիպի դպրոցներում մեծ տեղ է հատկացվել երգ-երաժշտության դասավանդմանը, քննարկվել են երաժշտության տեսության և գեղագիտության հարցեր, աշխատանքներ են կատարվել երաժշտածիսական մատյանների համալրման և խմբագրման ուղղությամբ: Ժամանակի առաջադեմ գեղարվեստական ըմբռնումներին համապատասխան՝ Անիում կատարելագործվել են պաշտոներգությունն ու ժամակարգությունը, իսկ աշխարհականացման խորացող ոգու ցայտուն դրսևորումների արգասիք էին այդ շրջանից ու միջավայրից սերող տաղային արվեստի նմուշները:

Անիի գեղարվեստական մթնոլորտի ձևավորման վրա ներազդել են երաժշտարվեստին առնչվող այնպիսի գործիչներ, ինչպիսիք էին Սարգիս Սևանեցի և Պետրոս Գետադարձ կաթողիկոսները, Ստեփանոս Ապարանցի եպիսկոպոսը, իշխան Գրիգոր Մագիստրոս Պահլավունին, Հովհաննես Սարկավագ Իմաստասերը, Հակոբ Սանահնեցի վարդապետը, որոնք պատմության մեջ մնացել են նաև որպես շարականագիրներ և տաղասացներ: X դ. երկրորդ կեսին Նարեկա վանքում ճգնել և ստեղծագործել է հանճարեղ Գրիգոր Նարեկացին՝ կերտելով իր «Մատյան ողբերգության» պոեմը և սքանչելի տաղերը, որոնք նոր խոսք էին ոչ միայն ազգային,

այլ նաև համաշխարհային արվեստում: Նշված հեղինակներից յուրաքանչյուրի երաժշտաբանաստեղծական ստեղծագործությունն արժանի է առանձին ուսումնասիրության:

Շարակնոցում զետեղված՝ Անիի հետ կապված շարականագիրների հոգևոր երգերը վկայում են, որ նրանց ստեղծագործություններում խտացվել են V–IX դդ. հայ հիմներգության լավագույն ձեռքբերումները, ընդլայնվել է ավանդական թեմաների շրջանակը: Առանձնակի հնչեղություն է ստացել նրանց գործերում հայրենասիրության թեման՝ կապված ժամանակի իրողությունների և ազգային-ազատագրական պայքարի հետ: Այդ շարականագիրները զգալի չափով նախապատրաստել են հայկական Կիլիկիայի երաժիշտբանաստեղծ հեղինակների ստեղծագործության մեջ իրագործած հետագա մեծ թռիչքը: Իսկ Մագիստրոսի և Հովհաննես Սարկավագի տեսագեղագիտական հայացքները երաժշտության բնագավառում նոր խոսք էին ամբողջ միջնադարի փիլիսոփայական մտքի անդաստանում:

Anna Arevshatyan (Armenia)
Institute of art of NAS RA

THE ROLE OF ANI IN THE HISTORY OF ARMENIAN MUSICAL CULTURE

Ani has a particular place in the history of Armenian medieval musical culture. According to data communicated by historians, under the reign of Bagratid kings Ani was the milieu in which developed Armenian *gousans'* (minnesingers') secular music, as well as the art of sacred chanting. In the medieval universities of Ani a great importance was given to singing and music teaching, to discuss issues of aesthetics and music theory, as well as to complete and compile musical-ritual miscellanies. The divine office was improved in Ani according to the artistic progressive notions of the time, while samples of the art of *taghs*, having its origin at that time and in this milieu, are the obvious evidence of a more and more advanced process of secularization. The musical ambiance of Ani was under the influence of prominent representatives of the Armenian musical culture, such as Catholicos Sarkis Sevanetsi, Petros Getadartz, Grigor Magistros and

Hovhannes Sarkavag Imastaser who practiced the art of music and were also known as hymnographers.

Sacred chants of Ani hymnographers, which had their place in *Sharaknots*-Hymnal, showed musical-poetic peculiarities which closely related them with indices crystallized in the Armenian hymnody of the 5th – 8th centuries. The favored genres were different parts of Canon, the frequently used of form '*Katsurd*', derived from the Byzantine *Kondak*. The frame of traditional themes was enlarged and the patriotic theme acquired a special importance connected with the situation of the time. These hymnographers greatly contributed to prepare the future huge upsurge occurred in the works of the Cilician Armenia authors.